ՀՏԴ: 947.925+070(479.25)

DOI: 10.54503/0135-0536-2025.3-41

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ՀՈՐԻԶՈՆ» ԹԵՐԹՈՒՄ (1914 թ. հոկտեմբեր – 1916 թ. հուլիս)*

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բանալի բառեր՝ Առաջին համաշխարհային պատերազմ, կամավորական գնդեր, «Հորիզոն» պարբերական, կոտորածներ, գաղթականներ, ինքնապաշտպանական մարտեր, ցարական իշխանություն, հերոս հրամանատարներ, ազատագրված Վան:

Ամփոփում

Հայ կամավորական շարժումը պայմանավորված էր հայության պատմա-քաղաքական ճակատագրի նախորդ ընթացքով, երբ XIX դարավերջից Արևմտյան Հայաստանում սկիզբ առավ ֆիդայական շարժումը՝ զինյալ դիմակայությունն ընդդեմ Օսմանյան կայսրությունում արևմտահայության ստրկացված իրավիճակի: Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումը աշխարհասփյուռ հայությանը հույս ներշնչեց, որ եկել է այն բաղձալի պահը, երբ օրակարգում է հայտնվում արևմտահայության ազատագրության հիմնահարցը: Ինչն էլ առիթ հանդիսացավ, որ հայության տարբեր հատվածների մեջ կամավորական շարժումը լայն թափ ստանա:

Հայ կամավորական շարժումը պայմանավորված էր Արևմտյան Հայաստանը ազատագրելու հայության փափագով և հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի օրգանական շարունակությունն էր: Դրան նաև նպաստեց Ռուսաստանի նպաստավոր դիրքորոշումը, որը սկսեց խրախուսել հայ կամավորական շարժումը:

Հայ ազդեցիկ քաղաքական պարբերականներից «Հորիզոն» օրաթերթը լայնորեն լուսաբանեց պատերազմի և կամավորական շարժման հետ կապված իրադարձությունները՝ հանդես գալով սեփական ուշագրավ դիտարկումներով ու վերլուծություններով: Թերթի էջերում լուսաբանվեցին հայ կամավորական ուժերի հերոսական գործողությունները, որոնք ուղղված էին արևմտահայության մնացորդները վերջնական բնաջնջումից փրկելուն: Կամավորական գնդերի շնորհիվ հազարավոր գաղթականներ փրկվեցին կոտորածներից ու բնաջնջման իրական սպառնալիքից: Պարբերականը համոզիչ տրամաբանությամբ փաստարկեց ու հիմնավորեց, որ հայ հասարակական-քաղաքական շրջանակների և

* *Ներկայացվել է 07. IX. 2025 թ., գրախոսվել է 31. X. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

զինվորականների առողջ բնազդով ու ձգտումներով ձևավորված կամավորական շարժումը մեր ժողովրդի պատմական ճակատագիրը շտկելու իրական թվացող կարևոր հնարավորություն էր:

Նախաբան

Հայ քաղաքական միտքը մինչև օրս քննարկում է Առաջին համաշխարհային պատերազմի հետ կապված և դրանով պայմանավորված կամավորական շարժման օրինաչափության և օգտակարության հիմնահարցը:

Կամավորական շարժման վերաբերյալ իրարամերժ, հակասական տեսակետներ են արտահայտվել և՛ ժամանակակիցների, և՛ հետագա սերունդների ներկայացուցիչների կողմից: Ոմանք դրվատել են այդ շարժումը՝ այն համարելով օբյեկտիվ, պարտադրյալ անհրաժեշտություն, մյուսները խստորեն քննադատել են՝ այն համարելով արկածախնդրություն: Թեև սառը, առանց հույզերի դատողություններ ևս արվում էին, սակայն, այնուամենայնիվ, գերիշխող եղան ոգևորիչ կոչերն ու հորդորները, որոնք հայ երիտասարդությանը գոտեպնդում էին զենք վերցնել և մեկնել ռազմադաշտ: Կուսակցությունները ևս, ի վերջո, կանգնեցին կամավորական շարժման պաշտպանության դիրքերում: Արևելահայ իրականության մեջ հրապարակվող ազդեցիկ պարբերականները և, առաջին հերթին, «Հորիզոն»-ն ու «Մշակ»-ը ոգևորությամբ լուսաբանում էին այդ շարժումը՝ հասարակության բոլոր հատվածներին հորդորելով ամեն ինչով նեցուկ լինել դրան: Իրադարձություններից շատ ավելի առաջ անցնելով՝ «Մշակ»-ը, օրինակ, համոզմունք էր հայտնում, որ «... հայերը կարող են և պետք է արտահայտեն իրենց ցանկությունը, որ ազատող Թուրքաց Հայաստանին տրվի վարչական կազմակերպություն՝ ավտոնոմիայի հիման վրա, Ռուսաստանի հովանավորության ներքոյ»[1]: Սփյուռքահայ անվանի գրող, գրականագետ Արշակ Չոպանյանը «Ազատարար պատերազմ» հոդվածում հորդորում էր. «Ընենք, ինչ որ կրնանք, որպէսզի մենք ալ, վաղը, աշխարհիս վերև ծագելիք արդարութեան արեւին տակ, ազատամարտիկ ազգերուն շարքին մէջ ազատութեան արժանի ազգերուն քովը բարձրաձակատ կարենանք երևալ»[2]:

1915 թ. սկզբից ի վեր կամավորական շարժումը դարձել էր լուրջ գործոն և նրա հետ հաշվի չնստել չէին կարող ո՛չ բարեկամ, ո՛չ էլ թշնամի ուժերը: Այսպես՝ ռուսական բանակի կովկասյան հրամանատարությունն ամենաբարձր մակարդակով իր շնորհակալությունն ու երախտագիտությունն է հայտնել հայ կամավորական գնդերի հրամանատարներին ու հայոց ազգային պատկան մարմիններին մարտի դաշտում հայ մարտիկների ցուցաբերած խիզախ վարքագծի դրսևորման համար:

Հետագայում հայերին թշնամի տերությունը՝ Օսմանյան Թուրքիան, և նրա իրավահաջորդները կամավորական շարժումը կդարձնեն մատի փաթաթան՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ժողովրդի դաժանագույն ոչնչացումն արդարացնելու նպատակադրումով: Սակայն Թուրք գաղափարախոսների այդ մոտեցումը արհեստական է, հեռու պատմական իրականությունից և ճշմարտությունից: Պատմաբաններին քաջածանոթ են այն հանրահայտ փաստերն ու իրողությունները, որոնք հաստատապես ու անվերկբա վկայում են, որ, անկախ հայ քաղաքական ուժերի ունեցած պահվածքից և

---

[1] *«Մշակ» (Թիֆլիս), 30. X. 1914:*

[2] *«Մշակ», 17. X. 1914:*

դիրքորոշումից, երիտթուրքական իշխանությունները իրենց օրակարգում դրել էին հայ ժողովրդի բնաջնջման և Օսմանյան կայսրությունը հայերից արմատապես մաքրելու հարցը:

Կամավորական շարժման ծնունդն ու զարգացման գործընթացը

Կամավորական շարժումը պատմական այն երևույթների շարքին է դասվում, որոնք ծնվել, սկզբնավորվել ու առաջացել են ոչ թե նախապես պլանավորված, այլ առավելապես տարերային կերպով՝ տվյալ պահի թելադրանքով ու հրամայականով:

Առաջին համաշխարհային պատերազմին հայությունը նվիրաբերեց և ի սպաս դրեց իր բովանդակ ուժերն ու ռեսուրսները: Ռուսական կայսրության տարածքում բնակվող 2 միլիոն 54 հազար հայերը ցարական բանակին տվեցին 250 հազար զինվոր: Իսկ Անտանտի մյուս երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի բանակներ զորակոչված հայազգի մարտիկների թիվն անցնում էր հիսուն հազարից[3]:

Սակայն դա կարծես բավական չէր խոշոր տերություններին, որոնք ցանկանում էին նորանոր մարդկային ռեսուրսներ նետել համաշխարհային պատերազմի ռազմադաշտ: Այսպես՝ ցարական կառավարության 1914 թ. հուլիսի 23-ի հայտարարությունից հետո, որը վերաբերում էր ռուսական բանակը նաև կամավորական ուժերով համալրելու գործընթացին, հայ քաղաքական շրջանները ակտիվորեն սկսեցին բանակցել Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ հայկական կամավորական ջոկատների կազմավորման հարցով: Այդ բանակցությունները վարում էր Հայոց ազգային բյուրոն, որի կազմում ընդգրկվել էին ժամանակի ամենաաչքի ընկնող հայ գործիչները, այդ թվում՝ Հովհաննես Թումանյանը, Առաքել Բաբախանյանը (Լեո), Հովսեփ Արղությանը և ուրիշներ:

Ցարական իշխանությունները սկզբնական շրջանում, առանց խանդի ու կասկածանքի, մեծապես դրվատեցին հայ կամավորական շարժման ծավալումը, սակայն որոշ ժամանակ անց այդ ոգևորությունը մարեց: Ի տարբերություն ցարական չինովնիկների՝ հայոց ազգային շրջաններում մեծ ոգևորություն էր տիրում, քանզի կամավորական զինյալ ուժերի ձևավորումը դիտարկվում էր որպես վտանգված արևմտահայությանը օգնության հասնելու և թուրքական յաթաղանից փրկելու հնարավորություն:

1914 թ. աշնանը հայ կամավորական խմբերի կազմավորման գործընթացը նոր թափ ստացավ: Ոգևորությունն աննախադեպ էր, որն ընդգրկեց ոչ միայն Արևելյան Հայաստանի տարածքը, Կովկասն ամբողջությամբ, այլև երկրագնդի գրեթե բոլոր այն վայրերը, որտեղ հոծ հայություն էր ապրում: Դրա հետ մեկտեղ ընդհանուր մտայնությունն այն էր, որ կամավորական շարժման գործընթացը պետք է ընթանա անկախ կուսակցական ու քաղաքական պատկանելությունից, քանզի արևմտահայության ազատագրումը թուրքական բռնապետությունից համարվում էր համազգային գործ:

Սկզբնական շրջանում ձևավորվեց կամավորական չորս խումբ: Հայկական կամավորական առաջին խումբը կազմավորվեց 1914 թ. հոկտեմբերին՝ Սալմաստում և բաղկացած էր հիմնականում արևմտահայերից: Նրա հրամանատար

---

[3] *Հայ ժողովրդի պատմություն. 1981, 547:*

նշանակվեց լեգենդար Անդրանիկը (Անդրանիկ Օզանյան): Այնուհետև ձևավորվեցին 2-րդ, 3-րդ և 4-րդ կամավորական խմբերը, որոնց հայ իրականության մեջ ընդունված է կոչել գնդեր: Երկրորդ խմբի հրամանատարն էր Դրոն (Դրաստամատ Կանայան), 3-ինը՝ Համազասպը (Համազասպ Սրվանձտյան), 4-ինը՝ Քեռին (Արշակ Գավաֆյան): Հետագայում ձևավորվեցին 5-րդ [հրամանատար՝ Վարդան (Սարգիս Մեհրաբյան)], 6-րդ՝ (հրամանատար՝ Արշակ Ջանփոլադյան), 7-րդ (հրամանատար՝ Հովսեփ Արղության) գնդերը: 1915 թ. վերջին հայ կամավորների ընդհանուր թվաքանակը հասավ 10 հազարի: Ռուսական հրամանատարությունը ընդհանուր առմամբ գոհ էր հայ կամավորական զինյալ ուժերի գործողություններից, սակայն քաղաքական հանգամանքներով պայմանավորված՝ ռուսական իշխանությունները հայկական կամավորական գնդերի հզորացմանը վերաբերվում էին խիստ զգուշավորությամբ ու անվստահությամբ:

Անկախ ցարական իշխանությունների վերաբերմունքից և դիրքորոշումից՝ կամավորական խմբերը ռազմաճակատի բոլոր հատվածներում ցուցաբերեցին անձնուրացություն ու խիզախություն, բարոյականային բարձր հատկություններ և անմնացորդ կերպով ու ուժերի գերագույն լարումով ծառայեցին հայրենի երկրի և ժողովրդի պաշտպանության գործին: Նրանք փառքով պսակեցին իրենց անունը՝ կատարելով առաջապահ, հետախուզական և պահակազորային ծառայություններ, ակտիվ մասնակցություն ունեցան Կովկասյան ճակատում մղված ամենաթեժ Դիլմանի, Սարիղամիշի, Էրզրումի, Ռևանդուզի ճակատամարտերին, Բերկրի-Կալայի, Վանի, Խնուսի, Մուշի, Բիթլիսի ազատագրմանը: Հայ կամավորականների անձնվեր գործողությունների ու հայրենանվեր վարքագծի շնորհիվ տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականներ փրկվեցին թուրքական վրեժխնդիր բարբարոսությունից:

Կամավորական շարժման արձագանքներն ու լուսաբանումը «Հորիզոն»-ի էջերում

Առաջին համաշխարհային պատերազմի առաջին իսկ օրերից հայ կամավորական շարժման թեման դառնում է կարևոր ու արդիական «Հորիզոն» օրաթերթի էջերում: Կամավորների հետ կապված ցանկացած իրադարձություն երբեք չէր մատնվում անուշադրության: Թերթը մշտապես դրվատանքով էր լուսաբանում հայ կամավորական խմբերի գործունեությունը: Կամավորական շարժման ծավալման համար, ըստ նրա, կար արդելափիթ հանգամանք. «... դա դրամի պակասն է կամ լաւ է ասել՝ դրամական աղբիւրների ոչ մշտականութիւնը, որ վստահութիւն ներշնչի պատասխանատու մարմիններին պատրաստի կամաւորների էլ՛ աւելի մեծ կոնտինգենտ ռազմաբեմ հանելու: Պատմական այս մեծ մոմենտի գիտակցութիւնը պէտք է խորանայ հայ ժողովրդի մէջ»[4]: Իսկ դրան հասնելու համար, բացի հայ հասարակության մեջ ընթացող միանվագ գումարների հանգանակությունից, որը սովորաբար ունևոր խավի կողմից էր իրա-

[4] *«Հորիզոն», 06. I. 1915:*

կանացվում, պետք էր լայն հանրության աջակցությունը «… ինքը կազմակերպէ օգնութեան գործը, ժողովրդի բոլոր խաւերի մէջ առաջ մղելով ամսավճարների կամ կամաւոր տուրքի սկզբունքը, և իւրաքանչիւր ամիս սիստեմատիկաբար հաւաքէ նախապէս խոստացած գումարները և հասցնէ ըստ պատկանելոյն»[5]:

«Հորիզոն»-ի խմբագրակազմի վստահ համոզմունքով՝ հենց այս է այն ուղիղ միջոցը, որով հայությունը կամավորների ֆինանսական օգնության գործը հաստատապես ապահոված կլինի ամեն տեսակ պատահարներից:

Թերթի հիմնական դիտարկումներից մեկը վերաբերում էր հայ կամավորական գնդերի ազգապաշտպան (հայապաշտպան) առաքելությանն ու գործառույթներին:

Արդարացի է այն դիտարկումը, որ առանց էական կորուստների կամավորական գնդերն ապահովեցին տասնյակ հազարավոր անօգնական հայերի (նաև ասորիների) տեղաշարժը Թուրքահայաստանից և Ատրպատականից դեպի Արևելյան Հայաստանի տարածք: Այժմ «հերթը կովկասահայ ժողովրդինն է. այս վերջին անգամն էլ պատսպարել և ապահովել գաղթականներին մինչև գալիք օրերը: Նույն կովկասահայ ժողովուրդը պիտի գիտակցի այն մեծ դերը, որ խաղում են հայ կամաւոր գնդերը թէ՛ պատերազմի դաշտում, թէ հայ ժողովրդի պաշտպանութեան գործում»[6]: Եվ կրկին հնչում է այն հորդորն ու շեշտադրումը, որ վերոնշյալ գիտակցությունը պետք է առաջ բերի «մի վճռականութիւն՝ չխնայել ոչ մի միջոց նիւթական և կազմակերպչական կարիքները հոգալու համար: Զսկէտք է մոռանալ որ այդ գնդերին ենք պարտական բազմահազար հայութեան կեանքի փրկութեամբ»[7]:

Սույն պնդումը, անշուշտ, լիակատար պատմական ճշմարտություն է, որը առավել բացահայտ ու մանրամասն պետք է ասվի: Բանն այն է, որ մեր գրականության և պատմագրության մեջ բավական մեծ դերակատարություն է հատկացվել ռուսական բանակին, որը, ընդհանուր առմամբ ճիշտ է, սակայն թերի է: Ըստ էության, անտեսվել է ռուսական բանակի կազմում հայ կամավորական գնդերի ունեցած մեծագույն ծառայությունն արևմտահայության ողջ մնացած հատվածին անխուսափելի բնաջնջումից փրկելու գործում: Ակնհայտ է, որ հայ կամավորներն իրենց արյունակիցներին պաշտպանելու և պատսպարելու գործում առավել հետևողական ու վճռական էին, քան օտարները:

Սույն թեման կրկին անհրաժեշտ հիմնավորում և զարգացում է ստանում խնդրո առարկա թերթի հաջորդ համարներում:

Այսպես՝ 1915 թ. հունվարի 11-ի «Գրիչն անզոր է» հրապարակման մեջ կրկին շեշտվում է, որ հայ կամավորական գնդերն անգնահատելի դեր կատարեցին թե՛ հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործում, թե՛ ռազմաճակատում. «Մի բոպէ ենթադրենք, թէ հայ կամաւորների երկրորդ գունդը չգտնուէր Ալաշկերտի շրջանում. ինչ կը լինէր այն ժամանակ այդ գաւառի հայ ժողովրդի վիճակը, որոնք ներկայումս Իգդիր են ժողուած և որոնց թիւը 20 հազարից անցնում է:

[5] *«Հորիզոն», 06. I. 1915:*
[6] *«Հորիզոն», 10. I. 1915:*
[7] *«Հորիզոն», 10. I. 1915:*

Պարզ է, որ ռուս զօրքերի հեռանալուց յետոյ բոլորին էլ սրի կը քաշէին քրդերն ու թիւրք բանակը, ինչպէս արին Բաշկալայի նահանջի ժամանակ, որտեղ բացակայում էին կամաւորները»: Նոյն թվականի հունվարի 24-ի «Մէկը միւսին չպիտի խանգարէ» հրապարակման մեջ նշվում է, որ գաղթականների հոծ հոսանքի տարերային ներխուժումը Արևելյան Հայաստան, նրանց անասելի տանջանքները, քաղցն ու մերկությունը մի պահ հայ հասարակայնության ամբողջ ուշադրությունը բևեռեց իր վրա՝ այն աստիճան, որ բոլոր անհրաժեշտ և հերթական խնդիրները կորցրին իրենց հետաքրքրությունը: Մինչդեռ փախստականների օգնության գործը որքան էլ ծանր ու ծայրահեղ անհրաժեշտություն լինի, այնուամենայնիվ «արգելք չպէտք է հանդիսանայ հայ հասարակութեանը մոռացութեան մատնելու իր պարտքը դէպի հայ կամաւոր գնդերը, որոնց մեծ նպատակներից մէկն էլ մեր ժողովրդի պաշտպանութիւնն է»:

Պարբերականի համոզմամբ՝ մեկ գործը մյուսին չպետք է խանգարի:

Թերթը նշում է, որ կամավորների անվերջանալի հոսք է սկսվել ամեն կողմից: Թուրքերը հատուկ չարությամբ և ատելությամբ են լցված նրանց հանդեպ: Եվ ռազմադաշտերում գերի ընկած կամավորներին թշնամու ճամբարում ռազմագերի չեն համարում ու այդպես չեն վերաբերվում նրանց հետ, այլ «... տանջում, խեղանդամում, մորթում, կախում են: Բայց և այնպես կամաւորների թիւը աճում է ու աճում»[8]:

1915 թ. մարտի 4-ին «Հորիզոն»-ը դիտարկում էր, որ երեք մեծ խնդիր ու հոգս ունի կովկասահայ ժողովուրդը: Առաջինը վերաբերում էր կամավորական գնդերի կարիքները հոգալուն, երկրորդը՝ գաղթականների ապահովմանն ու իրենց բնակության վայրեր վերադարձին, երրորդը՝ «վերջապէս, տեղական ժողովրդի այս տարուայ երկրագործական աշխատանքները կատարել»-ուն:

Թերթի էջերում բազմաթիվ փաստեր կան, թե ինչպես է աշխարհով մեկ սփռված հայությունը, խանդավառված կամավորական շարժման ահագնացող թափից, մեծ հույսեր կապելով այդ շարժման հետ, ամենուր իրենց ունեցածից շատ բան զոհաբերում հանուն կամավորական գործի: Բաթումից ստացված թղթակցության մեջ աներկբա տեսանելի է հայ մարդկանց ապրած ոգեշնչումն ու ոգևորությունը. «Վերջապէս. Ռուս-տաճկական պատերազմը իրականութիւն դարձաւ: Բոլորի դէմքերն էլ փայլում են, բոլորն էլ գիտէին ու բարկանում էին, որ ուշանում է: Պատերազմի հավանակութիւնը շատ կամաւորներ էր տարել Բաթումի և Սև ծովի ափերի հայերից:

– Հայրենիքը կանչում է ..., – ասում էին նրանք:

Եւ նրանց ձայնը արձագանքելով հասել էր Օդեսա ու Բուլղարիա: Բազմաթիւ հայեր իրենց խղճուկ խանութները ծախել ու ճամբայ էին ընկել Կովկաս:

– Հայրենիքը կանչում է ... Անդրանիկիս զինվոր է պետք: Ցեղի քնած կորովը արթնացել է և ամենքը գնում են: Փառք նրանց»[9]:

---

[8] *«Հորիզոն», 27. I. 1915:*

[9] *«Հորիզոն», 30. X. 1914:*

Կամավորական գնդերը հայ գաղթականության անձնուրաց պաշտպաններ և Արևմտահայաստանի ազատագրության երաշխավորներ

Պարբերականը բազմաթիվ առիթներով ուշագրավ դիտարկումներով և համեմատություններով բացահայտում էր այն ճշմարտությունը, որ կամավորական գնդերը ոչ միայն թուրքական յաթաղանից մի կերպ ճողոպրած հայ գանգվածների անձնուրաց փրկիչներն ու պաշտպաններն են, այլև Արևմտյան Հայաստանի ազատագրության ու նրա անվտանգության իրական երաշխավորները:

Պատերազմն աղետների և զրկանքների առջև կանգնեցրեց հայության արևմտահայ ու արևելահայ հատվածներին: Ականատեսներն ու պարբերականները օրեցօր նորանոր տեղեկություններ էին հաղորդում թուրքահայ և պարսկահայ գաղթականների անտանելի կացության վերաբերյալ: Առանձնահատուկ նշվում էր, որ, մինչև գաղթականներին շատ թե քիչ հարմար վայրերում տեղավորելն ու կենսական կարիքները բավարարելը, նախևառաջ անհրաժեշտ էր նրանց վերջնականապես փրկել հարձակվող թուրքական զորքերի և քրդական ելուզակների հետապնդումներից:

Դեռևս 1914 թ. հոկտեմբերի 31-ին վերոնշյալ առիթով թերթը հրապարակավ ահազանգում էր հետևյալը. «Թող չկարծի, թէ այն մեծ խանդավառությունը, որ ցույց են տալիս ռուսահայերը, և այն մեծ զոհաբերությունը, որ ստանձնում են բոլոր հայաբնակ վայրերը՝ տալով մեծ թւով կամաւորներ, որոնք գլխապատառ դիմում են դէպի թիւրքական սահմանները, խտացնելու ռուս զօրքերին կից հայ գնդերի շարքերը, նրա համար է միայն, որ հրապարակում դրւած է թիւրքահայերի ազատագրութեան խնդիրը, ո՛չ, այլ որ դրա հետ միասին կա և արդարութիւնը պաշտպանելու խնդիրը»:

«Հորիզոն»-ը միանշանակ դրական վերաբերմունք է դրսևորում հայ զինական ուժի՝ կամավորական գնդերի կայացման հանդեպ. «Զինական ոյժի կարևորութիւնը, որ դարեր շարունակ զգացել և երազել է հայութիւնը և այսօր էլ, երբ բախտի մի բարեյաջող դիպւածով հայն էլ հնարավորութիւն ունի զինւելու ... և կոտորածի ենթակայ թիւրքահային օգնութեան հասնելու»[10]:

Օրաթերթի համոզումով՝ պետք է դիմադրել բոլոր անպատեհություններին և հայության մեջ առավել ամրապնդել այն գիտակցությունը, որ « ... թիւրքահայի ազատագրութիւնը թիւրք կառավարութեան ճիրաններից կորզելու միակ միջոցը զինական ոյժն է, որի համար չպետք է խնայենք ոչ կեանք և ոչ կարողութիւն»[11]: Սա ճշմարտացի և առողջ տեսակետ է, քանի որ, անկախ հայ հասարակության ու քաղաքական ուժերի դիրքորոշումներից, երիտթուրքական իշխանությունները նախօրոք արդեն կողմնորոշվել և նախապատրաստվել էին հայ ժողովրդի բնաջնջումն իրագործելուն: Ուրեմն կամավորական շարժումը ոչ կարող էր պատճառ հանդիսանալ, ոչ էլ արագացնել թուրքերի եղեռնական գործողությունները:

Թերթի դիտարկումներում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ կամավորական զինուժի բացակայության պայմաններում հայ ազգաբնակչութ-

---

[10] *«Հորիզոն», 03. V. 1915:*

[11] *«Հորիզոն», 03. V. 1915:*

յան տված կորուստներն անհամեմատ ավելի մեծաթիվ էին լինելու: Կամավորական զինյալ ուժերի կարևոր առաքելությունը ներկա պատերազմում հայ գաղթականության պաշտպանությունն է, գաղթականություն, որը ժամանակավորապես պատսպարվում է «աղէտի սահմաններից, ժամանակաւոր ապաւինում իր եղբայրների օգնութեանը, մինչև խաղաղութեան և աշխատանքի շրջանը»[12]:

Կամավորական գնդերի քաջության մասին նշվել է նաև խոշոր ճակատամարտերի առնչությամբ: Այդպիսի մի խոշոր բախում էր ռուս-հայկական և թուրքական ուժերի միջև Դիլմանի ճակատամարտը՝ 1915 թ. ապրիլին: Թերթը նշում է, որ սա առաջին խոշոր ջարդն է պատերազմի սկզբից ի վեր. «Կռիւը շարունակւել է երեք օր և թիւրքերը 3500 զոհ թողնելով կռվի դաշտում՝ չարաչար պարտված փախուստի են դիմում»[13]: Այդ երեք օրերի ընթացքում ամենից ակտիվ ու խիզախաբար գործել են կամավորական ուժերը՝ Անդրանիկի գլխավորությամբ:

Հայկական կամավորական ամենախոշոր զորամիավորումը՝ առաջին գունդը, իր լեգենդար հրամանատարի հետ մարտի դաշտում անօրինակ քաջագործություններ ցուցաբերեց: Դիլմանի ճակատամարտով, ռուսական գեներալ Ֆ. Գ. Զերնոզուբովի դիպուկ արտահայտությամբ, իրականում որոշվում էր ամբողջ Կովկասի բախտը[14]:

Դիլմանի փառահեղ հաղթանակի առթիվ հայ կամավորների կողմից հյուսվեց իրենց լեգենդար հրամանատարին նվիրված հետևյալ երգը.

Հերոս մռնչեց, Սուլթան դողդողաց
Վիլհելմի աչքին արտասունք ցոլաց,
Սուրդ թշնամւոյ կրծքին շողշողայ,
Հայոց ղեկավար, հերոս Անդրանիկ[15]:

Հայ և օտարազգի պատմաբանները ճշմարտացիորեն դիտարկել են այն իրողությունը, որ Դիլմանի հաղթանակը ոչ միայն ձախողեց Կովկասը նվաճելու թուրքական ռազմական հրամանատարության ծրագրերը, այլև զգալիորեն արագացրեց օրհասական պայքարի մեջ գտնվող Վանի հայության փրկությունը: Այդ ճակատամարտից հետո հայկական և ռուսական ուժերի համար ճանապարհ էր բացվում դեպի հինավուրց Վան՝ հայոց քաղաքակրթական դարավոր կենտրոն:

Առաջին անգամ այդ առիթով տեղեկություն եղավ թերթի 1915 թ. մայիսի 9-ի համարում: Առաջին էջում գլխագրերով ազդարարվում էր, որ հայերը գրավել են Վանը՝ պետական ռազմամթերանոցով: Այնուհետև բերվում է կովկասյան բանակի շտաբի հաղորդագրությունը, որում ասված է, որ «... մեր զօրքերը գրաւեցին Սարայը, Բաշկալան, Վանը: Թիւրքերը փախան Բիթլիս և դէպի հարաւ»:

---

[12] «Հորիզոն», 05. IV. 1915:
[13] «Հորիզոն», 22. IV. 1915:
[14] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 37, ց. 1, գ. 76, թ. 2:
[15] Ա ւ ե տ ե ա ն. 1954, 164:

Հաջորդ օրը՝ մայիսի 10-ին, «Վանը գրաւուած» հրապարակման մեջ ասվում էր, որ Թիֆլիսում չորս-հինգ օր շարունակ համառ լուրեր էին պտտվում և հաճախ շատերն էին դիմում «Հորիզոն»-ի խմբագրություն, թե՝ «Վանն առնուած է և մենք դիտմամբ թագցնում ենք: Հայի այս նեարդային ու լարուած սպասողական դրութիւնը չափազանց հասկանալի էր, որովհետեւ, ինչպէս մի անգամ արդէն ասել ենք, «Վանի հայաշատ վիլայէթը հայութեան յոյսերի ու սպասելիքների կենտրոնն է», հետեւապէս՝ հայը՝ երեւակայի, թէ կարող է երբեւիցէ զրկուել իր «սրբութեան սրբոցից», – դա նրա համար միանգամայն անընդունելի էր»:

Այդ նույն համարում՝ առաջին էջում, հրապարակված էր Ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի «Վան ու Երևան» ուղենշային հոդվածը, որում այսպիսի խտացնող ու հայոց ողջ ճակատագիրը մարմնավորող տողեր կար. «Վան ու Երևան – կը նշանակէ՝ հայութիւն, մի հայութիւն, որ դարեր շարունակ իր բարձր գրականութեամբ և իր ճոխ կուլտուրայով ընկաւ իր աշխարհքի փլատակների տակ և միայն այժմ է դուրս գալիս – երկար դարերից յետոյ, անթիւ կեանքերի ու նրանց ջանքերի շնորհիւ»:

Բանաստեղծը խորապես համոզված էր, որ Վանի ազատագրությամբ ջնջվում է հայ կյանքի, գույքի ու պատվի անպատվաբեր և թշվառ կացությունը ու առասպել են դառնում անվերջ կոտորածներն ու սարսափները:

Պատմաբան Ռ. Օ. Սահակյանը, որը խորապես ուսումնասիրել է կամավորական շարժումն ու արևմտահայության ինքնապաշտպանական մարտերը 1915 թ. ընթացքում, իր աշխատության մեջ մեջբերում է ռուս սպա Ֆեոդոր Ելիսեևի դիպուկ բնորոշումը՝ «Հայ կամավորների համար … Վանը դարձել էր «Ավետյաց քաղաք»»[16]:

Վանի ազատագրության գործը իրականում կերտեցին հայ ինքնապաշտպաններն ու կամավորական ուժերը, որոնց հասցեին այնպես խմաստավորված ներբողներ են հնչում պարբերականի էջերում: Հենց հայկական ուժերի՝ գլխավորապես առաջին կամավորական գնդի և նրա հերոս հրամանատար Անդրանիկի նախաձեռնությամբ ու ջանքերով խափանվեց Դիլմանի տակ պարտված Խալիլ փաշայի զորքի նահանջի ճանապարհը դեպի Վան, ուր նա մտադրվել էր միանալ ջարդարար Ջևդեթ փաշային և կոտորել քաղաքի հայությանը: Անդրանիկը առանց ստանալու ռուսական բարձր հրամանատարության համաձայնությունը, իր գունդը շարժեց առաջ և գրավեց Բաշկալեի բարձունքները՝ դրանով իսկ փակելով Խալիլի զորքի ճանապարհը դեպի Վան[17]:

1915 թ. մայիսի 17-ին հրապարակված «Մեր յաղթական մուտքը Վան» վերնագրով թղթակցությունը՝ գրված կամավորների մեկի գրչով, նկարագրում է կամավորների մուտքը ազատագրված քաղաք. «Մենք իսկոյն հեծանք ձիերը և դիմեցինք դէպի մեզ դիմավորելու եկող ապստամբները: Ամենից առաջ գալիս էր Վանի հերոս Արամը (Արամ Մանուկյան – Ա. Կ.) իր ամբողջ զինուորական կազմով, յետոյ ապստամբ հայերը և ժողովուրդը: Եղբայրական գրկախառնութիւններից յետոյ մտանք Վան: Վանի փոշոտ փողոցներ ամբողջապէս ծածկուած էին մայիսեան վարդերով և ծաղիկներով, հազարաւոր ձիեր քայլում էին վարդերի և ծաղիկների վրայ: Ծեր, երիտասարդ, մեծ, փոքր, առողջ, հաշմանդամ

[16] Սահակյան. 2005, 227:
[17] Սիմոնյան. 1996, 448:

դուրս էին թափել և ուղիղ շարքերով կանգնած փողոցի երկու կողմերը, մինչև ձայնի վերջին նոտան՝ բղաւում էին՝ ուռա ...»:

Մայիսի 26-ին կրկին «Վան» վերնագրով թղթակցությունը՝ գրված ականատեսի կողմից, ազդարարում էր այն խիզախության և սխրանքի մասին, որ գործել էին քաղաքի ինքնապաշտպանության մարտիկները: Նրանում ասվում էր, որ Վանի կռիվը տևեց 30 օր, թշնամին 12 հազար ռումբ նետեց քաղաքի վրա. «Թնդանոթը համարեա վնաս չտաւ, տները ցերեկը կը քանդէր, գիշերը կը շարէինք, այնպէս որ, մենք որևէ դիրք չենք տուած թշնամուն, իսկ մենք թշնամուց խլեցինք քսանէ աւելի դիրքեր»:

Վանի ինքնապաշտպանները վստահ էին իրենց գործողությունների վրա, քանզի ոգևորված էին ռուս-հայկական զինուժի մարտադաշտում ցուցաբերած հաջողություններով և մշտական կապի մեջ էին հայ կամավորական ուժերի հրամանատարության հետ: Նրանք համոզված էին, որ հայ կամավորական բանակը իրենց մենակ չի թողնելու: Այդ մասին մի շարք վկայություններ են պահպանվել պատմագիտական գրականության մեջ և մամուլում:

Անդրադարձ հայ կամավոր զինվորի և հրամանատարի սխրագից կերպարներին

Հայ կամավորական շարժման, ռազմադաշտում կամավորների խիզախ գործունեության, կատարած քաջագործությունների վերաբերյալ նյութերը կարևոր, առանցքային տեղ էին գրաղեցնում «Հորիզոնի» էջերում: Ուշադրության և հարգանքի էին արժանանում այն բոլոր անձինք՝ շարքային քաղաքացիները, պետական պաշտոնյաները, ինչպես նաև հասարակական միությունները ու կազմակերպությունները, որոնք այս կամ այն կերպ առնչվում էին շարժմանը, ֆինանսավորում և հովանավորում էին հայ կամավորական զինված ուժերին: Ավելին՝ թերթի խստագույն և անողոք քննադատությունն էր հնչում բոլոր նրանց հասցեին, ովքեր որևէ ձևով, առանց խղճի խայթի, կամա թե ակամա փորձում էին վարկաբեկել հայ կամավորական շարժումը կամ նսեմացնել նրա դերակատարությունը հայրենի երկրի և ժողովրդի պաշտպանության գործում: Ըստ թերթի՝ այդպիսի «դաւադիր անհատներն անպակաս են, որոնք ամենայն յամառութեամբ, առանց խղճի խայթոցի, վարկաբեկել են ձգտում այնպիսի մարմիններ ու անուններ, որոնց մեր ժողովրդը պատերազմի սկզբից, մեծ հավատով ու երկիւղածութեամբ է վերաբերել և որոնք կապած են ներկայ կամաւորական շարժման հետ»[18]:

Որքան էլ դաժան իրավիճակ էր տիրում Արևմտահայաստանում, որտեղ թուրքական իշխանությունները գործի էին դրել հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը, այնուհանդերձ կար վերոնշյալ գործընթացին իրական հակազդեցություն ցույց տվող ուժ՝ հայ կամավորական գնդերը: Թերթը խորապես համոզված այն դիտարկումն էր անում, թե «այնուամենայնիւ, այն, ինչ որ

[18] *«Հորիզոն», 03. V. 1915:*

մենք ձեռք ենք բերելու և նոյն իսկ արդէն ձեռք ենք բերել, շատ աւելի մեծ է և շատ աւելի նշանակալից»[19]:

Սույն խորունկ և տարողունակ ձևակերպումը, անշուշտ, վերաբերում է հայ կամավորական ուժերի ձևավորմանը ու հայրենիքի ազատագրման գործընթացի փաստացի իրագործմանը: Հայ կամավորական գնդերի անուրանալի դերակատարության մասին անչափ կարևոր դիտարկում է արել հայազգի մեծանուն գործիչ Պողոս Նուբար փաշան՝ պատմաբան, լրագրող և հրապարակախոս Միքայել Վարդանյանին ուղղված նամակում, որը հրապարակվել է օրաթերթի 1915 թ. մայիսի 28-ի համարում: Պ. Նուբար փաշան, արտահայտվելով ներկա պահի, կամավորական շարժումների և հայոց հավաքական հույսերի և ակնկալությունների մասին, գրում է. «… Անձկությամբ ես հետևում եմ դէպքերին, ուսկից-տեղիք ունինք յուսալու – Հայոց հարցը դուրս գայ լուծած՝ համաձայն մեր իղձերի: … Տարակոյս չկայ, որ հայ կամաւորները, որոնք պատերազմի սկզբից ի վեր կուել են իրենց ազատիչների կողքին, շատ բան են արել մեր դատի համար … Պատերազմը շղթայազերծված է եւ կամաւորները, մարտնչելով դաշնակիցների հետ թեւ թեւի տուած, կարող են միայն ուժեղացնել մեր դատը եւ տալ մեզ իրաւունք՝ լսելի անելու մեր ձայնը, երբ ժամը կը հասնի ձեւակերպելու մեր արդար եւ համեստ պահանջները» *(ընդգծումը մերն է – Ա. Կ.):*

Սա ուշագրավ դիտարկում է, որը համապատասխանում է պատմական ճշմարտությանը: Ասել կուզի, որ հայկական կամավորական գնդերի փաստացի ստեղծումով ու ներկայությամբ հայ ժողովուրդը և նրա ներկայացուցչական մարմիններն առավել իրական հնարավորություններ էին ստանում Հայկական հարցի արդարացի կարգավորման գործում:

Թերթի էջերում տարբեր առիթներով թարգմանաբար նյութեր էին ներկայացվում օտարերկրյա հանդեսների էջերից : Այսպես՝ անգլիական մի հանդեսից արտատպված հոդվածում՝ «Հայաստանը ի՞նչ է անում դաշնակիցների համար», ընդգծվում է, որ հայ ժողովուրդն արժանի է առավել մեծ հարգանքի ու համակրանքի, քանզի հայ զինվորները դաշնակիցների կողքին մասնակցում են «ներկայ պատերազմին և կուում թէ արևելքի և թէ արևմուտքի թիւրքերի դէմ: … Նրանք գալիս են (կամավորները – Ա. Կ.) աշխարհի ամէն ծայրից անյողդողդ նպատակով – վանել իրենց երկրից թուրքերին, որոնք այնքան երկար աւերեցին այդ չքնաղ և երբէմն պտղավէտ երկիրը: Այդ կամաւոր բանակի սպառազինման և պահպանման ամբողջ բեռն իր ուսին վրայ է առել հայ հասարակութիւնը: … Բայց հայերը յոժարակամ ստանձնում են այս հսկայական զոհողութիւնները, հրճւելով այն հասունացած համոզումով, որ իրենց ազատագրման ժամը կը հնչէ շուտով»[20]:

Այս տողերով ասված է ողջ ճշմարտությունը:

1916 թ. ընթացքում պարբերականը համակ ուշադրությամբ հետևում էր ռուս-թուրքական ռազմաճակատում տիրող իրավիճակին և հայ կամավորական ուժերի մղած մարտերին: Փետրվարի 9-ին թերթն ընթերցողներին տեղեկացնում էր, որ ռուսաց զորքերը և հայ կամավորները շեշտակի գրոհներով գրավել են

[19] «Հորիզոն», 13. V. 1915:
[20] «Հորիզոն», 10. VI. 1915:

Մուշն ու Ախլաթը, «Հայաստանի մեծ կենտրոնները մին միւսի ետևից մեր ձեռքն են անցնում, հայ կամաւորական վաշտերը ձմրան բուք ու բորանին թև ու թիկունք են կանգնում ռուս յաղթական բանակին»: Միաժամանակ հույս էր հայտնում, որ սրտատրոփ սպասում են այն առաջին ծիծեռնակներին, որոնք լուրեր կբերեն մեր ավերված ու արյունաներկ հայրենիքից:

Թերթի հաճախակի երևացող խորագրերից էր՝ «Կամաւորի օրագրից», որի ներքո հանդես էին գալիս իրենք՝ ազատամարտիկ-կամավորները, կամ նրանց հետ շաղկապված անձինք: 1916 թ. փետրվարի 13-ի համարում՝ նույն խորագրի ներքո, թղթակից Գ. Շահինյանի նյութը վերաբերում է ձմռան պայմաններում հայ կամավորների իրագործած դժվարին ձեռնարկումներին, երբ «կես արշին ձիւնով» ծածկված են դաշտերը: Հեղինակն ընդգծում է, որ «Կամաւորութեան և հայ գիւղացի նոյնանիշ են, մէկը միւսին լրացնող. տաճկահայը այդպէս է ըմբռնում»:

Մարտի 6-ին թերթն ազդարարում էր, որ Հայաստանի կենտրոն հանդիսացող Կարին քաղաքը գրավված է, ու «ատիկա իբր հզոր ներշնչում, բաւական է արդէն մեր ժողովրդի համար, որ անիկա լիահաւատ շտապէ դէպի Երկիր»:

«Սասնոյ սուրհանդակ» խորագրի ներքո թերթի թղթակիցներից Կ. Երիցյանը հայտնում էր, որ «Էրզրումի գրաւումից մի քանի օր յետոյ, երբ ռուս բանակը հայ քաջարի կամաւորների հետ գրաւեց Մուշ, հեռագիր ստացուեցաւ թէ բաւական թիով ազատածներ կան: Սասունէն ալ 100 հոգի եկան»[21]:

1916 թ. մայիսի 24-ի խմբագրականն ազդարարում էր, որ Ռևանդուզի ճակատամարտում քաջաբար զոհվել է հայկական ազատամարտի հերոսներից մեկը՝ Քեռին (Արշակ Գավաֆյան): Զորրորդ հայկական կամավորական գունդը մնացել էր ծանր կորստի մեջ՝ առանց իր սիրած ու պաշտված հրամանատարի. «Ընկել է ժողովրդական մեծ հերոսը ... 58-ամեայ կաղնին տապալուեց երկաթատև ու կատաղի կռւից յետոյ, գոռ հողմերին ճակատելով: Ո՞վ չգիտե նրա թափն ու խիզախութիւնը կռւի մէջ»: Այդ համարից սկսած՝ հետագա բազմաթիվ համարներում բազում նյութեր, հիշատակի խոսքեր, ցավակցական հեռագրեր են հրապարակվել, որում հայ հանրությունը իր խորին սերն ու հարգանքն է հայտնում անվանի զորապետի հիշատակին: Հեռագրեր են ստացվել Թեհրանից, Բաքվից, Գանձակից, Թելավից, Ռոստովից, Մոսկվայից, Թիֆլիսից, Կարսից և այլ բնակավայրերից:

«Հերոսի մահը» խմբագրականում մանրամասնվում էր, թե ինչպիսի հանգամանքներում է մղվել Ռևանդուզի ճակատամարտը և ինչպես է նահատակվել Քեռին: Նշվում է, որ թուրքերն արդեն խուճապի մեջ էին և բռնել էին նահանջի ճանապարհը, երբ «... տեղի է ունենում նոյն եղերական դէպքը, ինչ որ Խեչօի նահատակութեան ժամանակ: Յաղթական թռիչքից յետոյ է, որ զարնում է Քեռի ճակտին մահաբեր գնդակը ...»[22]: Մայիսի 31-ին «Քեռիի յիշատակին. թաղման հանդէսը» ընդարձակ ակնարկում նկարագրվում է հերոսի վերջին հրաժեշտի

---

[21] *«Հորիզոն», 30. III. 1916:*

[22] *«Հորիզոն», 28. V. 1916:*

արարողությունը. «Յարգանքի այն չափը, որ մեր հասարակութիւնը սովորել է արդէն մատուցանել իր հերոսներին՝ անհուն բերկրանքով է լցնում մարդու հոգին: Այս սոսկալի տակնուվրայութեան օրերին իսկ հայ ժողովուրդը իրեն չի կորցնում այն աստիճան, որ հսկայական բազմութեամբ յուղարկաւորում է ամեն անգամ իր սիրելի հերոսներին»: Եվ ժողովուրդն է, որ սրբությամբ, գուրգուրանքով խնկում և պահպանում է հերոսների հիշատակը:

Թերթի հունիսի 8-ի համարում հրապարակվել էր հայոց ազատամարտի մյուս լեգենդար գործչի՝ Անդրանիկի ցավակցական հեռագիրը չորրորդ գնդի ժամանակավոր հրամանատարին. «Յայտնեցէք իր փառապանծ հրամանատարից զրկված գնդի խմբապետերին և զինուորներին իմ սրտագին զորակցութիւնը: Թող հերոսական մահւամբ նահատակւած Քեռու օրինակը ոգևորի ձեզ շարունակելու մեր պայքարը դարաւոր թշնամու դէմ մինչև մեր արյան վերջին կաթիլը»:

«Հորիզոն»-ի էջերում՝ «Մեր կորուստները» խորագրի ներքո, ներկայացվում էր հայ կամավորական գնդերի զոհերի և վիրավորների թիվը՝ որոշակի ժամանակահատվածում (անուն-ազգանուններով և ծննդավայրով): Այսպես՝ 1916 թ. հունիսի 17-ի համարում ներկայացված էին հայկական կամավորական չորրորդ գնդի կորուստները ապրիլի 26-ից մինչև մայիսի 30-ը (սպանվածներ՝ 14 հոգի, ծանր վիրավորվածներ՝ 37 հոգի, թեթև վիրավորվածներ՝ 20 հոգի):

Հուլիսի 2-ին հրապարակված ազդով Ազգային բյուրոն գուժում էր Անդրանիկի զինակից, հայտնի խմբապետ Ավոյի մահվան լուրը: Նշվում էր, որ Ավոն դեռ նոր էր բոլորել իր քառասնամյակը և ամենակրտսերն էր «… Անդրանիկեան այն փառաւոր Ուխտի, որ քսան տարուց ի վեր գրկել է ազատութեան և մարտի դրոշը, կռւել է հայկական լեռնաշխարհի բազմաթիւ անկիւններում»: Ավոն կամավորական շարժման եռանդուն գործիչներից էր. թեև թոքերի հիվանդությունն արդեն իրեն նեղում էր, սակայն ընավ չէր ուզում թողնել մարտադաշտը. «… քսան տարւայ իր անձնուէր գործունեութեամբ նա կերտել է իր աննիւթ ու խնկելի յուշարձանը հազարաւոր սրտերում»:

Թերթը, ընդհանրացնելով հայկական ազատամարտի ունեցած կորուստները, դրանք ներկայացրեց «Տերևաթափ» ակնարկով. «Տերևաթափ է … ընկնում են հայ ազատագրական շարժման հին մարտիկ ոյժերը մէկիկ-մէկիկ»[23]:

1916 թ. հուլիսի 28-ին թերթը, նշելով մարտերում նահատակված նոր ընկերների անունները (Մշեցի Մնջոն, Գոմսեցի Կորյունը, Շենիկցի Ղազարը և ուրիշներ), հետևյալ մեկնաբանությունն է անում. «Ամիսներ շարունակ տաճկական կանոնաւոր զօրքի ու քիւրդ աշիրէթների դէմ կռւելուց յետոյ գաղափարի և ժողովրդի պաշտպանութեան համար հպարտօրէն ընկան շատ թանկագին, ազատագրութեան այդ ղեկավար հերոսները: Հպարտ են այդ վայրերը. չէ որ իրենց գրկում են խիզախօրեն կռւել ու ընկել ազատութեան այս և ուրիշ հերոսներ» (ընդգծումը մերն է – Ա. Կ.):

[23] *«Հորիզոն», 03. VII. 1916:*

Եզրակացություն

Հայ կամավորական շարժումը, որ սկզբնավորվեց Առաջին համաշխարհային պատերազմի ծագման պահից, ուներ պատմական, բարոյահոգեբանական, ազգային-քաղաքական խորը դրդապատճառներ: Չնայած այդ հանգամանքին՝ կամավորական շարժումը հակասական տրամադրություններ ծնեց հայ հասարակական-քաղաքական շրջաններում: Լսվեցին զգուշավոր կեցվածք ընտրելու անհրաժեշտության կոչեր: Սակայն հիմնականում գերիշխող էր կամավորական շարժմանը սատարելու և համազգային գործիքակազմով այն առավել ուժեղացնելու, հզորացնելու մտայնությունը: Հայ ազդեցիկ թերթերից մեկը՝ Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն»-ը, իր էջերում լայնորեն լուսաբանեց հայ կամավորական շարժման ընթացքը, հետապնդած նպատակներն ու խնդիրները, հայ հանրության վերաբերմունքը կամավորների հանդեպ:

Պարբերականի էջերում խմբագրի, թղթակիցների և հրապարակախոսների ազնիվ ջանքերով իմաստավորվեց հայ կամավորական գնդերի սխրալից գործունեությունը, կերտվեց հայ կամավոր զինվորի ու հրամանատարի արի և ոգեշունչ կերպարը, արժանի հերոսականության լուսապսակով օժտվեց ու օծվեց նրանց հավաքական դիմանկարը:

Պարբերականը միանշանակ հանդես եկավ կամավորական շարժման պաշտպանության դիրքերում՝ ցուցաբերելով իրատեսական, հայոց պատմության դասերից բխող արդարացված դիրքորոշում:

Արմեն Կարապետյան – պ. գ. թ., ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ հասարակական-քաղաքական մտքի և մամուլի պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ազգային-ազատագրական շարժում, ազգային կուսակցությունների և մամուլի պատմություն: Հեղինակ է 1 գրքի և ավելի քան 50 հոդվածի: ORCID:0009-0003-6026-2790.
armenaraqsyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այրող հարցեր. – «Հորիզոն», 06. III. 1916:

Առաքելյան Հ. Ռուս-թուրքական պատերազմը և հայ ազգը. – «Մշակ», 30. X. 1914:

Աւետեան Մ. 1954, Հայ ազատագրական շարժման յիսնեամայ (1870–1920) յուշամատեան և Ջօր. Անդրանիկ, Պարիզ, “De Solerd” տպ., 526 էջ:

Աւօ. – «Հորիզոն», 02. VII. 1916:

Գիտակցենք մեր պարտքը. – «Հորիզոն» (Թիֆլիս), 31. X. 1914:

Գրիչն անզոր է. – «Հորիզոն», 11. I. 1915:

Դիլմանի հաղթանակը. – «Հորիզոն», 22. IV. 1915:

Թումանեան Հովհ. «Վան ու Երևան». – «Հորիզոն», 10. V. 1915:

Կամաւորի օրագրից. – «Հորիզոն», 13. II. 1916:

Կամաւորները և գաղթականները. – «Հորիզոն», 10. I. 1915:

Հայ ժողովրդի պատմություն. 1981, հ. VI, Երևան, ՀՍԽՀ ԳԱ հրատ., 547 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 37, ց. 1, գ. 76, թ. 2:
Հայաստանի իրական շահերն ու համակրութիւնները. – «Հորիզոն», 10. VI. 1915:
Հայերը գրավել են Վանը՝ պետական ռազմամթերանոցով. – «Հորիզոն», 09. V. 1915:
Հերոսի մահը. – «Հորիզոն», 28. V. 1916:
«Հորիզոնի» սեփական հեռագիրներ. – «Հորիզոն», 04. III. 1915:
Մեր կորուստները. – «Հորիզոն», 17. VI 1916:
Մեր յաղթական մուտքը Վան. – «Հորիզոն», 17. V. 1915:
Մեր յաջողութիւնները. – «Հորիզոն», 13. V. 1915:
Մէկը միւսին չպիտի խանգարէ. – «Հորիզոն», 24. I. 1915:
Մոմենտի լրջութիւնը. – «Հորիզոն», 06. I. 1915:
Նուպար փաշայի մի նամակը. – «Հորիզոն», 28. V. 1915:
Չոպանեան Ա. Ազատարար պատերազմը. – «Մշակ», 17. X. 1914:
Ռուս հասարակութեան վերաբերմունքը դէպի հայերը. – «Հորիզոն», 27. I. 1915:
Սահակյան Ռ. Օ. 2005, Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, ԳԱԱ հրատ., 401 էջ:
Սառնասրտութիւն, բայց աշխատանք. – «Հորիզոն», 03. V. 1915:
Սասնոյ սուրհանդակ. – «Հորիզոն», 30. III. 1916:
Սիմոնյան Հր. 1996, Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Երևան, «Կաիսա» հրատ., 751 էջ:
Վան. – «Հորիզոն», 26. V. 1915:
Վանը գրաւուած. – «Հորիզոն», 10. V. 1915:
Տաճկական պատերազմի շուրջը. – «Հորիզոն», 05. IV. 1915:
Տերեւաթափ է. – «Հորիզոն», 03. VII. 1916:
Փանոսեան Ան. «Վերջապէս». – «Հորիզոն», 30. X. 1914:
Քեռիի յիշատակին. – «Հորիզոն», 08. VI. 1916:
Քեռիի յիշատակին. թաղման հանդէսը. – «Հորիզոն», 31. V. 1916:
Քեռին սպանուած. – «Հորիզոն», 24. V. 1916:
Օգնութեան գործը պետք է կազմակերպել. – «Հորիզոն», 05. XI. 1914:

ОСВЕЩЕНИЕ АРМЯНСКОГО ДОБРОВОЛЬЧЕСКОГО ДВИЖЕНИЯ В ГАЗЕТЕ «ГОРИЗОНТ»
(октябрь 1914 г. – июль 1916 г.)

АРМЕН КАРАПЕТЯН

Р е з ю м е

Ключевые слова: Первая мировая война, армянские добровольческие отряды, газета «Горизонт», резня, армянские беженцы, оборонительные бои, царские власти, командиры-герои, освобождённый Ван.

Предтечей армянского добровольческого движения было зародившееся в конце XIX века в Западной Армении фидаинское движение как оплот вооружённого сопротивления османам – поработителям. Добровольческое движение являлось продолжением национально-освободительной борьбы и было обусловлено стремлением армян освободить Западную Армению от османского гнета. Формированию движения способствовала также благоприятная позиция царской России, власти которой всячески поощряли его.

Один из органов армянской периодики – ежедневная газета «Горизонт» – широко освещала события, связанные с Первой мировой войной и добровольческим движением. На страницах газеты публиковались материалы о действиях армянских добровольческих сил, направленные на спасение западноармянского населения от окончательного уничтожения. Благодаря добровольческим отрядам тысячи беженцев – сироты, женщины и дети – были спасены от резни и реальной угрозы истребления.

Армен Карапетян – к. и. н., старший научный сотрудник отдела истории армянской общественно-политической мысли и печати Института истории НАН РА. Научные интересы: армянское национально-освободительное движение, история национальных партий и печати. Автор 1 книги и более 50 статей. ORCID:0009-0003-6026-2790. armenaraqsyan@mail.ru

COVERAGE OF THE ARMENIAN VOLUNTEER MOVEMENT IN THE “HORIZON” NEWSPAPER (October 1914 – July 1916)

ARMEN KARAPETYAN

S u m m a r y

Keywords: World War I, Armenian volunteer regiments, the "Horizon" newspaper, massacres, Armenian refugees, defensive battles, the Tsarist authorities, heroic commanders, liberated Van.

The forerunner of the Armenian volunteer movement was the fedayeen movement, which arose in Western Armenia at the end of the 19th century as a stronghold of armed resistance against the Ottoman enslavers. The volunteer movement was the continuation of the national liberation struggle and was driven by the aspiration of the Armenians to liberate Western Armenia from Ottoman oppression. The formation of the movement was also supported by the favorable position of Tsarist Russia, the authorities of which encouraged it in every possible way.

The daily newspaper “Horizon”, one of the Armenian periodicals, widely covered events connected with World War I and the volunteer movement. The newspaper published materials about actions of the Armenian volunteer forces

aimed at saving the population of Western Armenia from final extermination.Thanks to the volunteer regiments, thousands of refugees, including orphans, women, and children, were rescued from massacres and the real threat of extermination.

Armen Karapetyan – Candidate of Historical Sciences, Senior Researcher at the Department of History of Armenian Social and Political Thought and Press of the Institute of History of NAS. Scientific interests: Armenian national-liberation movement, history of national parties and press. Author of 1 book and 50 articles. ORCID:0009-0003-6026-2790. armenaraqsyan@mail.ru

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 3